19. 4-52

digitised by A.R.A.R.@

[illegible]

[illegible]

[illegible]

(1840)

digitised by A.R.A.R.@

Խադդի հիւմայունին օրինակն է։

Այս պատժոյ վերաբերեալ կանոնագիրքը նայեցայ, ամէն կերպով խիստ յարմար պարագայիւք գրուած ըլլալուն համար՝ հաւանելով հաստատեցի · և այս գրուածները ՚ի գործ դըրվելուն՝ թէ ինքնակալութեան կողմանէ և թէ ամէնուն կողմանէ որովհետև ուխտ եղած է, ահա նոյն պատճառաւ կը պարտաւորին որ ամէն գործառնութիւնը աղէկ և բարակ նայելով գործի դնեն։

Եւ արդարութեան վճռոց ժողովը (այսինքն մէճլիսի ահքեամի ադլիէն) որովհետև բոլոր կանոնները հաստատ պահողն է, անոր համար՝ այս նոր սահմանեալ կանոնագրքին նախագաղափարը հոն տեղը պահվի։

Եւ տպեալներէն ալ՝ թէ բոլոր մահքէմէներուն և թէ թագաւորական քաղաքներուս խորհրդարաններուն (այսինքն մէշվէրէթի մէճլիսներուն) մէջը գըտնըվին, և ամէն կարգադրական և կանոնական գործքերն ալ անոր համեմատելով գործեն։ Եւ այս կանոնագրքիս վրայ եթէ մէկ քանի հարկաւոր բաներ ալ աւելցընել պէտք ըլլայ նէ, ան ալ հարկ եղած կերպովը ՚ի գործ դըրվի։

Յառաջաբանութիւն։

Հաճկաց յիսուն և հինգ թուականին և շաբանի ամսոյն քսան և վեցերորդ օրը՝ Կիւլխանէն կար-

digitised by A.R.A.R.@

դայլած արքայական խադդըլի հիւմայունին հար-կադրութենէն , Օսմանեան մեծի տէրութեան հպատակները այսուհետև հաւասարապէս իրենց հոգւոյն և ընչիցը տէր ըլլալով՝ ըրդ և պաշտպանու-թիւննին նորէն տացեր են :

Եւ որովհետև շէրիին պահանջմանը և արդա-րութեանը նայելով՝ թէ դատաստանի մէջը , և թէ կանոնական կամ իրաւունք խնդրելու գործառնու-թեանց մէջը ամմէնքը հաւասար բռնել հարկ է , և քանական օրէնք եղած է :

Ուստի ամէն մարդ այսուհետև իրենց իրա-ւունքէն և ստացուածքէն չանցնի , և եթէ մէկը մէկալին ստացուածքին վրայ իշխել ուզէ նէ , ըս-տացուածքին տէրը անոր չի թողելու համար՝ բո-ղոքելու կարող ըլլայ :

Եւ սահմանւած կանոններուն հակառակը գոր-ծող ով որ ըլլայ , և ինչ աստիճանի մէջը գտնուած ըլլայ , անոր պէտք եղած պատիժը որոշելուն համար՝ Արքունի հրամանաւ այս կանոնագիրքը

կարգի դրվեցաւ :

ՅՕԴՈՒԱԾ · Ա

Բան առաջին · Ինչ հանրապէս մեծի տէրութեան հպատակ եղողները՝ եթէ իրենց օրինաւոր թագա-ւորին դէմ յանցանք ընեն , և եթէ տէրութեան վերաբերեալ գործողութեանց մէջը չշնջիւն և խռովութի (ֆիթնէ) ձգելու , կամ թէ մարդ-սպաննելու պէս գործքերու յանդգնելու ըլլան նէ , այնպիսիներուն առանց ղարէզի երկար բարակ քննութեամբ յանցանքնին հաստատւելէն յետոյ՝ վճիռնին չը կտրըւած , դաղտնի և յայտնի ամե-նեխին մէկը չի մահացընելու համար՝ որովհետև բա-

digitised by A.R.A.R.@

ըեխնամ Արքային ուխտերն է , նոյն պատճառաւը մեծի տէրութեան նախարարները՝ և ընդհանրապէս ուրիշ անձինքները մէկու մը հոգին միաւնելու և սպաննելու կարող չըլլան . մինչև այն աստիճանը որ՝ օրինակի աղագաւ , մէկ վեզիր մը՝ չօպան մը սպաննելու ըլլայ , նոյն վեզիրին՝ դատաստանաւ փոխադարձը (այսինքն գլուխը) պիտի ըլլայ :

Բան երկրորդ . Վերջապէս այս մահացընելու կերպն ալ՝ ահա այսպէս մեծի և փոքրի վրայ հաւասար բռնուի :

Բան երրորդ . Եթէ այս մահացընելու գործքը կոստանդնուպօլսոյ մէջը պատահելու ըլլայ նէ , բազմաց հաստատութեամբն և սուտ վկայութեան նոցին՝ միայն Շէյխիսլամին առջևը բարակ քննութեամբ դատուի , և յանցանքը յայտնի և երևան ելլալը Արքային իմացումն տըրուի . և ապա Ինքնակալին կողմանէ մինչև հրաման չըլլայ , անոր ըսպանման գործքը չի կատարուի :

Բան չորրորդ . Եւ եթէ այս գործքը դըրսի քաղաքները պատահելու ըլլայ նէ , նախ՝ նոյն քաղաքին մէշլէրէթի մէճլիսին մէջը ինչպէս որ յիշեցինք , հաստատեալ կանոններուն համեմատելով՝ դատաստանին տեսնուի . և ապա պէտք եղած իլամը՝ նոյն մէճլիսին յայտարար գրովը (այսինքն մազպադայովը) մէկ տեղ Շէյխիսլամին ղըրկուի , և նորին կողմանէ ալ բանը հաստատուելէն յետոյ՝ նախայիշէն կերպով ծանուցանելով Արքային՝ մինչև անոր համար հրաման չերթայ չի կատարուի :

ՅՕԴՈՒԱԾ . Բ

Բան առաջին . Վրդովիչ (այսինքն ֆեսատի տըլըլ) մարդիկ յայտնի է որ՝ երկու կերպով կըլլայ , մէկը

digitised by A.R.A.R.@

լեզուով՝ և միւսը գործքով․ օրինակի աղագաւ , ըսենք թէ մէկ մարդ մը՝ տէրութեան կամ թէ անոր կարգադրեալ կանոններուն հակառակը գործել տալու համար՝ մէկ ուրիշ մարդու կամ թէ թախըմ մը մարդու ֆէսատի խօսքեր խօսելու ըլլայ նէ , տըված ֆէսատին թէրթիւ և ծանրութեանը նայելով , մէկ տարիէն մինչև 'ի հինգ տարին քիւրէկը դրուի ։

Բան երկրորդ․ Եթէ գործքով ֆէսատ ընող ըլլայ , որ՝ մէկ մարդ մը՝ մէկ ուրիշ անձ մը կամ թէ թախըմ մը մարդիկները ապստամբեցընելու հրաւիրէ , և անոնց սիլահ և պարութ տալու յանդըգնութիւն ընէ , որովհետև այս յանցանքը խիստ մեծ է , այնպիսիները սպաննըւի ։

Բայց ասանկ մահուամբ դատապարտեալներուն սպաննման վըճիռը ըլլալէն յետոյ՝ ըստ որում Արքայէն ալ հրաման պիտի խնդրըւի , այն յանցաւորին սպաննման հրամանը՝ կամ փոխարէն սպաննման մշտընջենաւոր քիւրէկը դրուիլը՝ բարեխնամ Թագաւորին կամացը յանձնըւի ։

Բան երրորդ․ Թէ լեզուով և թէ գործքով ֆէսատ ընելու յանդգնողները եթէ կոստանդնուպօլսոյ մէջը պատահին նէ , դատաստանին միայն մէծլիսի ահքեամի ատըլիէյին մէջը տեսնըւի ։

Բան չորրորդ․ Եթէ դըրսի քաղաքները պատահելու ըլլայ նէ , նախ և յառաջ՝ նոյն քաղաքին մէշվէրէթի մէծլիսին մէջը տեսնըւի , և ապա նոյն մէծլիսին յայտարար գրովը մէկ տեղ այն մարդը և անոր վկայները կոստանդնուպօլիս բերըւելով , նմանապէս նախայիշեալ ժողովյն մէջը նոյն դատը կըրկին տեսնըւի ։

digitised by A.R.A.R.@

ՅՕԴՈՒԱԾ · Գ

Բան առաջին · Որովհետև մէկ մարդուն իր ըրածը նամուսը իրեն հոգիին պէս ազնիւ է · ուստի մէկ մարդուն իթիպարին դըպչելու խօսքեր խօսիլը, և կամ թէ ծեծելը, և քըֆրելը՝ անոր ունեցած նամուսը աւրել ըսել է ։

Ու ասկէց յետոյ թէ խաւաս՝ և թէ նէֆէր՝ կամ թէ ասքէրի գլխաւորները իրենց գլխուն մէկու մը զարնելու, և մինչև մէկ անարգանաց խօսք մը խօսելու հրաման չունին · ղէրէ իրենց պաշտօնը՝ եթէ սօխախը մէկ կռիւ և նիզա մը ըլլայ, կամ թէ մէկ յանցաւոր մը պատահելու ըլլայ նէ, առանց մէկ բան մը ընելու միայն թէ զանոնք բռնելով՝ շիտակ հարկ եղած զապիդին տեղը տանել և յանձնելն է ։

Ուստի այսուհետև նախայիշեալ խաւաս և նէֆէր և զօրաց գլխաւորներէն և ընդհանրապէս ով տէրէձէ և սընըֆէն գտնըված ըլլայ նէ թող ըլլայ, մէկ ուրիշի մը քըֆրողը՝ և անոր իթիպարին դպչելու խօսք խօսողը՝ եթէ կոստանդնուպօլսոյ մէջը գտնըվի, և անիկա եթէ մեծի տէրութեան աստիճանաւոր անձինքներէն կամ իւլէմաներէն եղած ըլլայ, այնպիսիներուն դատաստանը միայն մէձլիսի ահքեամի ատլիէյին մէջը տեսնըվի ։

Ու այն մարդուն գլուխ և զապիդ գտնըվողին ձեռամբը՝ յանցանքին ծանր և թեթևութենը կէօրէ հինգ օրէն մինչև քսան և հինգ աւուր չափ յանցաւորը բանտը դըրվի · և եթէ յանցանքին խիստ թեթևութիւնը յայտնըվելու ըլլայ նէ, ժողովոյն մէջը անոր միայն յանդիմանութիւն տըրվիլը բաւական ըլլայ ։

Բան երկրորդ · Ու այս գործքը՝ եթէ աստիճանաւորի կամ իւլէմաի մը կողմանէ՝ զօրաց զապիդ-

digitised by A.R.A.R.@

ներուն մէկին հետը պատահելու ըլլայ նէ, նմանապէս անոնց դատաստանն ալ մէշլեսի ահքեսմի տալնէ մէջը տեսնըվի. և այն զօրաց զաղիդներէն գըտնըվող մարդուն յանցանքը յայտնըվելու ըլլայ նէ, զօրաց վերաբերեալ կանոնագրքին նայվելով՝ պատիժը տրվելուն համար՝ Սերասքէրին դուռը խրբկըվի. եթէ յանցաւորը աբբունի կամ ծովային զօրքերէն ըլլայ, նմանապէս իրենց մեծերուն խրբկըվի։

Բան երրորդ. Ստիճանաւոր չեղողներուն մէկը՝ որ սընրքիէն կըլլայ թող ըլլայ, և այս կերպով հասարակ մարդկանց ալ տավա և նիզա պատահած տեսնը՝ նոյն տեղն զապիդի ձեռամբը այն կողմերը գըտնըված մահքէմէն տարվի. և հոն տեղը յանցաւորին յանցանքը հաստատվելէն յետոյ՝ որ կողմին մուրթալիա է նէ, նեբբոյդրեալ կերպովը պատիժը և թերպիյէն տրվելու համար, շերիի իլամով հանդերձ այն տեղը խրբկըվի։ Ու զօրաց նէֆէրներէն սեպված խավաներուն հարկ եղած պատիժը՝ զօրաց կանոնագրքին համեմատելով՝ ի գործ պիտի դրվի։

Ու ուրիշները ինչպէս որ յիշեցինք՝ քրքիրելու և պատուց և լիթիպարի դրպչելու խօսք մը խօսելու պէս գործքերու հետևին նէ, նմանապէս եթէ խիստ թեթև յանցանք է նէ, յանդիմանելը բաւական ըլլայ. և եթէ ծանր է նէ, հինգ օրէն մինչև քսան և հինգ աւուրը չափ բանտը դրվի։

Բան չորրորդ. Եթէ դրսի քաղաքները տասնկ բաներ պատահելու ըլլայ, անոնց տավան՝ ի հարկէ մէշլեսէթի մէշլեսներուն մէջը պիտի տեսնվի, և պատիժներն իրենց զապիդին ձեռամբը՝ ի գործ պիտի դրվի։

Բան հինգերորդ. Նմանապէս որ սընրքիէն կըլլայ թող ըլլայ, մէկը միւսին վրայ ձեռք վերցընելու և կամ գործիքով մը ծեծելու ըլլայ, վերը յիշվածին

digitised by A.R.A.R.@

պէս՝ հարկ եղած տեղը դատաստանը տեսնըլլելէն յետոյ՝ յանցանքէն աստիճանին նայելով՝ տասն և հինգ օրէն մինչև երեք ամսոյ չափ բանտը դրըլլի ․ և այս ալ գիտցըլլի որ՝ մէկ մարդ մը մէկալէն չոր իֆթիրամը ընելովը, ինքըն անոր վճիռ չի կըտրըլլի․ այլ երկար բարակ քննութիւներ ըլլալէն յետոյ՝ եթէ անստոյգ և զրպարտութիւն (թ̃ իֆթիրա) ըլլալը յայտնըլլի նէ, այն մարդուն ըրած իֆթիրային չափին կէօրէ՝ իրեն պատիժ հինգ օրէն մինչև քառասուն և հինգ աւուր չափ բանտը դրըլլի ։

ՅՕԴՈՒԱԾ ․ Դ

Բան առաջին ․ Մեծի տէրութեանը կողմանէ այսուհետև մէկին ընչիցը և ստացուածքին ձեռք չի դըպչըլլելուն՝ ըստ որում բարեխնամ Արքայն ուխտ ըրած է ․ անոր համար թէ մեծ և թէ փոքր մէկը միւսին ստացուածքին՝ առանց իրաւունքի խառնըլլիլ, և զըլունի առնել, և իրեն կամ ուրիշի ձեռօք ծախել տալու զօռ ընել ըստ ամ̃ կերպով չի պիտի կարողանայ ։

Բան երկրորդ ․ Ինկեց եակը այսպիսի արգիլուած գարշելի բաներու համարձակող ըլլայ նէ, այսինքն եթէ մէկը՝ միւսին ստացուածքին իշխելու ըլլայ նէ, թող չի տրըլլի ․ և եթէ ձևով մը զաւթըրած գըտնըլլի նէ, այն զաւթ ըրած ինչքը և ստացուածքը եթէ իր քովն է նէ՝ ինքը, և եթէ իր քովը չէ նէ՝ գինը առաջին տիրոջը տըրըլլելէն ՚ի զատ, այն մարդը կանոնի հակառակ գործքերու յանդգնութիւն ընելուն համար, եթէ մանսուպի տէր է նէ, իր պաշտօնէն հանըլլի ․ և եթէ այս թախըմէն չէ նէ, աքսորըլլի քաղաքէն ուրիշ տեղ՝ տարի մը չափ մնալով անդ ։

digitised by A.R.A.R.@

ՅՕԴՈՒԱԾ . Է

Բան առաջին . Որովհետև բոլոր իւլէմաներուն՝ նախարարներուն՝ վէզիրներուն՝ զօրապետներուն՝ ընծայներուն՝ մեծի տէրութենը գործակալներուն՝ համարակ զօրքերուն՝ և վերջապէս որ սընըֆէն և ազգէն կըլլայ թող ըլլայ , բոլոր պաշտօնատարներուն ալ բաւական ապրուստ և ամսական կապված է . ահա կաշառք (թ̃ ըռշվաթ) և կամ կաշառքի նման ընծայներ առնելու պատճառ մը չըմնալուն համար՝ այսուհետև ասանկ գարշելի բանին յանդըգնութիւն ընել չըլլայ ։

Բան երկրորդ . Եթէ ընող ըլլայ նէ , առած կաշառքը իրմէն առնըվի , և պէյթիւլմալին յանձնըվի . և կաշառք առնող մարդն ալ եթէ մանսուպի և պաշտօնի տէր է նէ , այնուհետև մեծի տէրութեանը պաշտօններուն մէջը խուլլանըլմիշ չըլլալով , գըտնըված գործքէն ալ ըլլայ , և աստիճանն ալ վրայէն առնըվելով՝ երեք տարիի չափ քիւրէկը դըրվի ։

Բան երրորդ . Նոյն եթէ պաշտօնատար գըտնըված չըլլայ նէ՝ անկէց սօղրայ ալ ամենևին մեծի տէրութեանը պաշտօններուն մէջը մըտնալու չի կարողանալով , նմանապէս երեք տարիի չափ քիւրէկը դըրվի ։

Բան չորրորդ . Կաշառք առնողին պատիժը՝ նոյնպէս կաշառք տըվողն ալ պիտի կրէ ։

Բան հինգերորդ . Բայց եթէ կաշառք տըվող մարդը իրեն խնդիրքը կատարելու յուսովը և իր հաճութեամբը չէ տըվեր , և միայն կաշառքը առնողին բռնութեամբը և վախցընելովը տըվեր է նէ , այն ժամանակը զըկանք (թ̃ զուլում) եղած ըլլալով՝ տըված բանը ետ տըրվիլը արժան համարվի ։ Բայց ասանկ բռնութեամբ իրմէն առնըված առենը խա-

digitised by A.R.A.R.@

կոյն հարկ եղած տեղը խապար չի տալն ալ՝ լատ ո-
րում իրեն մէկ կերպ մը յանցանք է , անոր համար
նոյն ժամոյն խապար չի տայ նէ՝ ՚ի տեղի պատժոյ
քաղաքէն ուրիշ տեղ տարիի մը չափ աքսորուի ։

Բան վեցերորդ · Պաղի յայտնապէս ատէթ եղած
ընծայներուն ընդունելն ալ՝ միայն Ինքնակալին հը-
րամանաւը ըլլայ ։

Բան եօթներորդ · Թէ հարսնիքներու ատեն՝ և թէ
բարեկամաբար առնուիլը օրէնք եղած ընծայ-
ներուն ալ ձինսը և որքանութիւնը ուրիշ կանոնով
մը պիտի յայտնուի և չափը կտրուի , որ այն չա-
փէն աւելին ընդունուիլը՝ արժան չի համարուի ։

ՅՕԴՈՒԱԾ · Ձ

Բան առաջին · Մեծի տէրութեանը մալիէին գոր-
ծակալները , ՚ի թահսիլաթի և իմալաթի և մա-
սարիֆաթի մէմուրները , և դլլալերը եղող մուհա-
սըլները , և մաքսին և պինաներուն էմինները , և
ատոնց քոլը գըտնուելու պաշտօնեաները՝ տէրու-
թեան հովանաւորութեամբը բաւական օրական և
ամսական ունին · ուստի այսուհետև գողութեամբ
և այլ ինչ կերպով իրթիքեապներու պատճառ մը
չըմնալուն համար՝ ասանկ գարշելի գործքերէն
կատարելապէս հեռացուի ։

Բան երկրորդ · Մերձապէս արքայական կողմանէ
իրեն կապված ապրուստէն ՚ի զատ՝ տեղաց մը ամե-
նեւին մէկ անունով մը և պատճառաւ մը ստակ մը
առնուիլը արժան չի համարուի ։

Բան երրորդ · Եթէ գողութեան յանցանքին հա-
մարձակութիւն ընող ըլլայ նէ , ՚ի քիչ կամ շատ
բանիմը իրթիքեապ ընէ նէ , թէ և որ մեծ աստի-
ճանին մէջ գըտնուած ըլլայ , յայտնի դատաստանը
տեսնալով՝ յանցանքը հաստատուելէն յետոյ , գու-

digitised by A.R.A.R.@

ցած ինչքը անկէց առնըվի ․ և եթէ հաղըր փարայ չունի նէ, միայն գողցած բանին չափաւորութիւնը անոր ստացուածքէն հատուցումն ըլլայ ․ և պա ինքն ալ՝ մեծի տէրութեանը պաշտօններուն մէջը մտնալու չի կարողանայ ․ և ստախօսն ալ վըրայէն առնըվելով՝ երեք տարիի չափ քիւրէկը դըրվի ։

ՅՕԴՈՒԱԾ ․ Է

Բան առաջին ․ Այսուհետև թահսիլաթի և իմալաթի և մասարիֆաթի մէմուրները իրենց ամէն ամիս՝ ատէթ եղած հիսապները տեսնըվելէն ՚ի զատ՝ տարին անգամ մըն ալ կըլլին իրենց հիսապները նայելու մէմուր եղող խալէմներուն մարիֆէթովը զատ զատ տեսնըվելէն և քըննըվելէն յետոյ, այն հիսապներուն տէֆթէրները՝ մէճլիսի ահքեամի ասլիէյին պիտի մատուցվի ․ որ անոնց առած և տըվածները՝ նոյն ժողովին կողմանէ հարցըվի ։

Ու առածներէն և տըվածներէն բան մը գողցուցերէ նէ, գողցող մարդէն առնըվի, և այնպէս այն մարդը գործերուն վրայ կանոն դըրված պատիժին նայվելով պատժըվի ․ և այն մէմուրն ալ եթէ այս բանին տեղեակ ըլլալով՝ թոյլտուութիւն ըրեր է նէ, իր պաշտօնէն ալ ըլլալովն պատժըվի ։

Բան երկրորդ ․ Մէկ մէմուր մը՝ եթէ պէտք չեղած տեղ մը կամ բանի մը փարայ տալով՝ արքունի ինչքը թէլէֆ ըրած է նէ, և կամ թէ չինված միհիմմաթը իրեն տըրված նիւմիւնէին յարմար չըլլայ նէ, եղած թէլէֆը և զիյանը՝ նոյն մէմուրէն հատուցվի ։

Բան երրորդ ․ Բաս որուն ամէն մէկ մէմուրին առածը և տըվածը՝ ժողովին կողմանէ հարցուփորձ ըլլալով, և ինքն ալ միասին հատուցանող պիտի ըլլայ, այն պատճառաւը ունեցած սպասաւորներին ի-

digitised by A.R.A.R.@

րենց քովը հաւատարիմ ըլլալը հարկաւոր է . ուստի այսուհետեւ անանկ պաշտօններուն մէջը ամենեին մէկին խօսքերը համար մարդ ծառայութիւն ընել տալու կարող չըլլայ ։

Բան չորրորդ . Ու այս հարցմունքները միայն առածին եւ տրվածին յատկացեալ չէ , որովհետեւ մեձլիսի ահքեամի ատլիյէն բոլոր սահմանված կանոններուն հաստատ պահողն է , անոր համար ամեն իւլեմաններուն՝ եւ նախարարներուն՝ եւ բոլոր գործակալներուն՝ եւ պաշտօնատարներուն իրենց հրամայեալ բաներուն վրայ ըրած ամեն մէկ գործքերնին եւ հարաքէթնին՝ նոյն ժողովին կողմանէ հարցուփորձ պիտի ըլլայ ։

Օրինակի աղագաւ , ըսենք թէ՝ մէկը իրեն հրամայեալ գործին մէջը ծուլութի ըրեր է տէի ըսեն , եւ ինքն ալ չի կարենայ ինքը զինքը արդարացընել , եւ շատերն ալ անոր վրայ դատախազ ըլլան նէ , այն մարդը իսկոյն իր աստիճանէն ելլալու պարտաւորի ։

ՅՕԴՈՒԱԾ . Բ

Բան առաջին . Քաղաքի մը մէջ իշխանութիւնը երեք կերպ է . մէկը՝ դատաւորները , որ շէրիին եւ կանոնին էմինը եւ պահպանողն են ։ Միւսը՝ միւշիրները եւ զօրապետներն են , որ քաղաքներուն հանգըստութիւնը եւ դըրված կարգադրութիւնը պահպանելը անոնց վրայ յանձնըված է ։ Իսկ երրորդը՝ մալիէի գործակալ եղող մուհասըլներն են , որ տէրութեանը ինչքը ժողովելը , եւ ժամանակին այս կողմը խըրկելը՝ անոնց յատկացեալ գործն է ։

Ասոնց պատահած գործքերնին՝ թէ իրենց մէջը , եւ թէ դըրկըված քաղաքին մեձլիսին մէջը՝ աստիճանին փոքրկութիւնը եւ կամ մեծութիւննին ալ չի նայվելով , ասոնց զարկզի եղ-

digitised by A.R.A.R.@

բայրաբար հարցմունք ընելին, և պէտք եղածին չափ ալ մէկ ըզմէկու օգնելին՝ թէ և իրենց պաշտօնին հարկաւորութենէն է. բայց մէկին խապարը չեղած՝ միւսը ամենևին անոր գործին չը խառնըվի։

Բան երկրորդ. Դուցէ թէ խառնըվելէն կամ ուրիշ կողմանէ մը մէջերնին խօսք խօրատ պատահելով երբեմն ամբաստանութիւն ընեն, նուրբ հայեցողութեամբ դատաստանը տեսնըվելէն յետոյ՝ յանցանքը որինանէ՝ անիկա պատժըվի։

ՅՕԴՈՒԱԾ. Թ

Բան առաջին. Որովհետև նորոգ սահմանեալ կանոններուն հարկադրութենէն՝ ամէն մարդ իրենց ընչիցը և ապրուստին վրայ, վերջապէս իրենց վերաբերեալ ունեցածներուն վրայ, ապահովութիւնը ըլլալու արժանացեր են. բայց բոլորն ալ հրամանի և շերիի և կանոնի վճիռներուն հնազանդութիւն ընելու պարտաւոր են. և անհնազանդ գտնըվողները հարցուփորձ ըլլալով՝ պիտի պատժըվին. և մանաւանդ թէ մեծ և թէ փոքր ամէն մարդուն իրեն կարողութիւնը և ստացուածքին կէսօրէ կապված տուրքը ժամանակին տալը՝ իրեն վրայ պարտք եղած է. անոր համար եթէ ասոր հակառակ կող գտնըվի նէ, այն մարդը բանտը դրըվի՝ և տուրքը անկէց ուզվի։

Բան երկրորդ. Եթէ զապիդի կողմանէ գործի մը համար ուզվելու ըլլայ, և սաղգ պատճառ մը չունենալով՝ չի գայ նէ՝ 'ի տեղի պատժոյ տասն օրէն մինչև քառասուն աւուր չափ բանտը դրըվի. և մէկ մարդ մը բերվելու համար զապիդի կողմանէ գացող մարդուն ընդդիմութիւն ընողը բռնութիւն բերվի։

Բան երրորդ. Զապիդ գտնըվողներուն դէմ կեցող՝ կամ թէ սիլահ քաշելու պէս գործքերու յան-

digitised by A.R.A.R.@

դրգնութիւն ընողները՝ ձեռքերը կապած կոստան-
դնուպօլիս բերուի, և երկու տարի քիւրէկը դրուի․
և եթէ այն մարդը զապիդին դէմ թիւֆէնկ կամ
փիշթօլ պարպած ըլլայ, թէ և բասթ բերած չըլ-
լայ ալ նէ, երեք տարի քիւրէկը դրուի․ և եթէ
խուրշինով կամ ուրիշ գործիքով վիրաւորած ըլ-
լայ նէ, նոյն յանցաւորը հէմ հինգ տարի քիւրէ-
կը դրուի, հէմ վիրաւորին վէրքը մինչև բժշկը-
վի նէ, գացած ծախքը անկէց առնուի․ և եթէ
վիրաւորեալը վէրքէն մեռնելու ըլլայ, փոխարինա-
բար այն վիրաւորողն ալ սպաննուի։

ՅՕԴՈՒԱԾ․ Ժ

Բան առաջին․ Եթէ հասարակութենէն մէկը միւս
մարդու մը թուր քաշած ըլլայ նէ՝ տարի մը, և
եթէ սիլահ պարպած ըլլայ նէ՝ երկու տարի քիւ-
րէկը մնայ․ և եթէ վիրաւորած է՝ այն մարդը հէմ
երեք տարի քիւրէկը դրուի, հէմ այն վիրաւորը
մինչև որ ըռըմնայ՝ ծախքը անկէց առնուի։
Բան երկրորդ․ Իսկ եթէ վէրքին ներգործութե̃ը
(այ̃ թէսիրը ընելովը) մեռնելու ըլլայ, նոյնպէս
փոխարէն ինքն ալ մեռցնելը հարկ կըլլայ։

ՅՕԴՈՒԱԾ․ ԺԱ

Բան առաջին․ Պաղի ճամբաները աւազակութիւն
ընողները՝ եթէ մարդ չի մեռցնելով՝ միայն հանվե-
ցնելու յանդգներ է նէ, եօթը տարի քիւրէկը
դրուի։
Բան երկրորդ․ Եթէ մարդ մեռցնող ըլլալնին ա-
ւանց հաստատմամն գիտցուեր է նէ, տասը տարի
քիւրէկը դրուի։

digitised by A.R.A.R.@

Բան երրորդ · Ու եթէ ստուգիւ մեռուցած ըլլալնին հաստատուի նէ, իրենք ալ անոնց փոխանակը սպաննըլլին :

ՅՕԴՈՒԱԾ · ԺԲ

Բան առաջին · Ինչպէս որ նախ յիշեցինք, ասկէց յետոյ թէ շէրիի մէջ՝ և թէ կանոնական և իրաւական գործառնութեանց մէջ ամէն մարդ հաւասար պիտի բռնըլլի · բայց ամէն մարդ ալ իրենց զապիդներուն և գլխաւորներուն կատարեալ հնազանդ ըլլան, և ամէն գործողութեանց մէջ պարկեշտութեամբ վարուին, և իրենց վրայ հարկաւոր չեղած բաներու չի հետևին · անոնց հակառակը գործողին յանցանքին կէօրէ պատիժը և թէրպիյէն պիտի տըրըլի :

Բան երկրորդ · Ոյքան որ դատաստանը կըտըրըլլէն յետոյ՝ մինչև որ չի հաստատուի նէ, ամենևին մէկին զուր տեղը բանտը դրուիլը՝ և պատժուիլը՝ և աքսորուիլը՝ արժան չի համարուի :

ՅՕԴՈՒԱԾ · ԺԳ

Պոլսերը գտնըլող մուհասըլներուն՝ արքունի Դըռնէն, և դատաւորներուն՝ Շէյխիսլամին կողմանէն, և զապիդներուն՝ Սէրասքէրին կողմանէն Թալիմնամէներ տրուած է · ուստի անոնց հակառակը գործողը՝ այս պատժոց կանոնագրքին մէջը դրուած յանցանքներուն մէկը ըրած ըլլալով, դրուած պատիժն ալ նոյն ժամուն գործէ պիտի դրուի :

digitised by A.R.A.R.@

Վերջաբանութիւն ։

Մ՝ինչև ցայս վայր գրուած կանոնները և հաստատուած պատիժները՝ թէ մեծի տէրութէը աստիճանաւոր գտնուող անձանց վրայ, և թէ հասարակ տաճիկ և ուրիշ ազգաց վրայ՝ հաւասարապէս բռնուելով առանց մէկ ղարէզի մը գործի պիտի դրուի ։

Ուստի այս սահմանեալ կանոնները պահելու միայն տէրութեան կողմանէ մէմուր գտնուողներուն յանձնուած չէ, այլ հասարակութիւնն ալ որովհետև ընկերական պարտաւորութե̃ տակ գտնուած է, անոր համար այս կանոնական բաներուն վրայ տիխաթ ըլլան · և այս կանոնները չի պահող գտնուի նէ՝ մեծի տէրութեան կողմը խապար տալով՝ արդարութիւն խնդրելու ամէնն ալ իրաւունք ունենան ։

Նաև այս սահմանեալ կանոններուն վրայ մէկ քանի հարկաւոր բաներ ալ աւելցընել հարկ ըլլայ նէ, մտած-մամբ և հանդերձ մէճլիսով գործի պիտի դրուի ։

Այս արտայայտեալ պատժոց կանոնագիրքը կնքող՝ նախարարներուն՝ և մեծամեծ իւլէմաներուն՝ և մէճլիսի ահքեամի ադլիէյին աղաներուն՝ և ուրիշ պաշի երևելի մարդոց անուանները են ։

Սատրազամ · Շէյխիսլամ ·
կորդաւորեալ զօրաց սէրասքէր՝ Խալիլ րիֆաթ փաշայ ·
մէճլիսի ահքեամի ադլիէյին գլխաւոր՝ Րէուֆ փաշայ ·
Թիճարէթի նազըր՝ Ֆէթհի փաշայ ·
գափուտան տէրեա՝ Սալիհ փաշայ ·
խարիճիէի նազըր՝ Մուսթաֆա րէշիտ փաշայ ·
արքունի զօրաց միւշիր՝ Րիզա փաշայ ·
մէճլիսի ահքեամի ադլիէյին մէմուր՝ Հասիպ փաշայ ։

digitised by A.R.A.R.@

Մեծաւոր եպիսկոպոսներն և նոյն դիշխին աշակերտներն։

Ապոստոլ գաւառը պէյ էֆէնտի •
Էմին պէյ զատէ՝ Ապոստոլ գաւառը պէյ էֆէնտի •
Արիֆ հիքմէթ պէյ էֆէնտի • Մէհէմմէտ էսատ էֆէնտի։
ուսմանի նաֆիսի ժողովոյն միւֆթի՝ մեծամեծ իւլէմանե-
րէն Մէհէմմէտ ըսաֆի էֆէնտի։
սատրազամին միւսթէշար՝ Սաիտ միւհիպ էֆէնտի •
մալիէի նազիր՝ Սաիպ էֆէնտի •
նախկին տէֆթէրտար՝ Մուսա սաֆվէթի էֆէնտի •
զարպխանէի նազիր՝ Զիվէր էֆէնտի •
վալիտէ սուլթանին քէթխիւտա՝ Դահիր պէյ էֆէնտի •
տասվի նազիր՝ Նէճիպ էֆէնտի •
ֆէրիկներին սինուսի մուսաֆիր՝ Հիւսէյին փաշայ •
միւհիմմաթի հարպիէի նազիր՝ Արիֆ պէյ էֆէնտի •
էվգաֆի հիւմայունի նազիր՝ Շէվգի էֆէնտի •
կարգաւորեալ զօրաց միւսթէշար՝ Էտհէմ պէյ էֆէնտի •
ուսմանի խարիճիէ նազիրներին միւսթէշար՝ Ռիֆաթ պէյ
էֆէնտի •
պահրիէին միւսթէշար՝ Մազլում պէյ էֆէնտի •
թիճարէթին միւսթէշար՝ Էնվէրի էֆէնտի։

Նախայիշեալ դիշխին աշակերտներն։

Էտհէմ էֆէնտի • Նաֆի էֆէնտի • Քաւիդ էֆէնտի •
Ռաիֆ էֆէնտի • Աղէք պէյ էֆէնտի • Աքիֆ էֆէնտի։
Թէշրիֆաթճի Սաիտ պէյ էֆէնտի •
պէյլիկճիի վէքիլ՝ Միւմթազ էֆէնտի •
տիվանի հիւմայունին առաջին նիւման մահիր պէյ էֆէնտի •
մէքթիւպճի Զիւհտի պէյ էֆէնտի •
տարխանէի գրագիր՝ Շէհապ էֆէնտի •
խարիճիէի գրագիր՝ Շէվքէթ պէյ էֆէնտի •
տիվանի հիւմայունի թէրճիման՝ Ալի էֆէնտի •
տասվի նազիրներին առաջին մուավին՝ Իսմայիլ էֆէնտի •
մէճլիսին գրագիր՝ Նասիր էֆէնտի •
մէճլիսին երկրորդ գրագիր՝ Միւհսին էֆէնտի։

Այլոց դիւանագիրներն։

Թէվֆիզ պէյ էֆէնտի • Մուսդաֆա սամի էֆէնտի։

1256 Ռէպիլէվվէլ 1

= 1840 Մայիս 3

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@